

ՍԱՂՄՈՍ 32

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՑ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ*

| NASB | NKJV | NRSV | TEV | NJB |
|---|------------------------------|-----------------------------|--------------------------|------------------------|
| Ներված լինելու և Աստծուն վստահելու երանությունը | Ներված լինելու ուրախությունը | Գոհություն բժշկության համար | Խոստովանություն և ներում | Մեղքի անկեղծ ընդունում |
| <u>MT ներածություն</u> «Դավթի Մաղմուս. Մասչիլ (մտորում)» | | | | |
| 32:1-2 | 32:1-2 | 32:1-2 | 32:1-2 | 32:1-2 |
| 32:3-7 | 32:3-5 | 32:3-4 32:5 | 32:3-4 32:5 | 32:3-4 32:5 |
| | 32:6-7 | 32:6-7 | 32:6-7 | 32:6-7 |
| 32:8-11 | 32:8-9 | 32:8-9 | 32:8-9 | 32:8 32:9 |
| | 32:10-11 | 32:10-11 | 32:10-11 | 32:10 32:11 |

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») *ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԵՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՑԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. MT ներածության պատճառով շատ գիտնականներ հավատում են, որ այս Մաղմուսը՝ ինչպես և Սաղմոս 51-ը, նկարագրում է Դավթի մեղքը (այսինքն՝ Բերսաբեի հետ սեռական մեղքը և Ուրիայի սպանությունը, տես՝ 2 Թագավորաց 11), ծածկելը (տես՝ 2 Թագավորաց 12) և թողությունը (այսինքն՝ չնայած որ նրա մեղքի հետևանքները կործանեցին իր ընտանիքը): Հռոմեացիների 4:7-8-ում Պողոսը մեջբերում է 32:1-2 (LXX) որպես թե այն վերաբերում է Դավթին:

Բ. Սա իհարկե հնարավոր է, սակայն հնարավոր է, որ այն ունի շատ ավելի լայն նկատառում և նպատակ (տես՝ Սաղմ. 32:11-ի ՀՈԳՆԱՎԵՆԵՐԸ): Մեղքը և դրա հետևանքները տարածված են բոլոր մարդկանց վրա (տես՝ Հռոմ. 1:8-3:18), անգամ ուխտի մեջ գտնվող մարդկանց (տես՝ Հռոմեացիների 7, 1 Հովհաննես 1:5-10):

Գ. Սաղմոսերգուի ֆիզիկական խնդիրները Աստծո ողորմածությունն էր, որպեսզի թույլ չտար, որ ուխտի մեջ գտնվող մեղավորը մնար իր ըմբոստության մեջ (տես՝ Եբր. 12:7-13): Մեղքն իր հետևանքներն ունի, բայց փառք Աստծուն, որ չնայած դրանց, ողորմած Աստվածը հետամուտ է լինում մեզ: Եբր մեղքը շատանում է, շնորհքն ավելիով է շատանում (տես՝ Հռոմ. 5:20):

Դ. Այստեղից կարող է մարդը հետևություն անել, թե որ գաղափարները, դեպքերը և խնդիրներն են կարևորվում մշակույթի մեջ, այն խոսքերի թվաքանակով, որ օգտագործվել է սա նկարագրելու համար: Ակնհայտ է, որ Իսրայելը մտահոգված էր ուխտի դեմ ապստամբության համար (տես՝ 3 Թագավորաց 8), ինչպես նաև թողության համար: Խոսքերը շատ են մեղքի և ապստամբության վերաբերյալ:

Ե. Սաղմոս 31 և Սաղմոս 32 հնարվոր էր միացնել իրար խմբագրի կամ հավաքագրողի կողմից, քանի որ երկուսն էլ քննարկում են մեղքի ֆիզիկական հետևանքը (տես՝ Սաղմ. 31:9-10, 32:3-4):

Չ. NASB Սերտողության Աստվածաշունչը (էջ՝ 769) տալիս է մի հետաքրքիր տեսություն խոսողների վերաբերյալ:

1. Դավթի և ՅԱՀՎԵԻ միջև երկխոսությունը խորանում, Սաղմ. 32:1-2
2. Դավիթը խոսում է ՅԱՀՎԵԻ հետ հավաքված երկրպագուներին ականջալուր, Սաղմ. 32:3-7
3. մի քահանա դիմում է Դավթին ՅԱՀՎԵԻ համար, Սաղմ. 32:8-10
4. Դավիթը խոսում է հավաքված երկրպագողներին, Սաղմ. 32:11

Է. Այս Սաղմոսը շեշտադրում է՝

1. մարդկանց մեղավորությունը
2. Աստծո ողորմած բնավորությունը
3. ինչպես կարող է մեղավոր անձը դառնալ սուրբ Աստծուն ընդունելի (այսինքն՝ խոստովանությունը)

Պողոսն օգտագործում է Սաղմ. 32:1-2 համարները Հռոմեացիների 4-ում, որտեղ քննարկում է «հավատքի միջոցով՝ շնորհքով արդարացման» մասին ՀԿ-յան օրինակներ (տես՝ Հռոմ. 3:21-31, Գաղատացիների 3, Եփես. 2:8-9), հայտնում է համատեքստը որպես ՆԿ-ում այս թեմայի ՀԿ-յան օրինակի արծարծման և առաջնահերթություն դարձնելու: Սա հանդիսանում է մարդու ներում ստանալու կորիզը, չնայած որ այդ ներման մեխանիզմը չի նշվում (այսինքն՝ Քրիստոսի ավետարանը): Մինչդեռ հստակ հայտնում է ՅԱՀՎԵԻ ողորմած, գթառատ ներման հասանելիությունը (այսինքն՝ «բարձրացված, հեռացված և ծածկված»):

Եթե ՅԱՀՎԵԻ կարող է ներել դավթին, Նա նաև կարող է ներել քեզ: Ընդունի՛ր այդ ներումը խոստովանությամբ ու ապաշխարությամբ: Ապա կանգնիր խոստումների մեջ ներված:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 32:1-2

¹Երանի՛ նրան, ում անօրենությունը ներված է,

Ում մեղքը ծածկված է:

²Օրհնյալ է այն մարդը, ում Տերը հանցանք չի վերագրում,

Եվ ում հոգու մեջ նենգություն չկա:

32:1 «Երանի» (BDB 80, տես՝ Սաղմ. 1:1, /45 անգամից 26-ը կիրառվում է Սաղմոսներում/, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ (ՀԿ)) տերմինը պարբերաբար կրկնվող թեմա է Իմաստասիրական Գրականության մեջ և նկարագրում է հավատարիմ հետևորդներին:

1. Հոբ 5:17, Սաղմ. 94:12 – խրատված *Շարղայի* կողմից
2. Սաղմոս 1:2 – սովորում և քայլում է Աստծո Խոսքի մեջ
3. Սաղմոս 2:12 – ապավինում է ՅԱՀՎԵԻՆ
4. Սաղմոս 32:1-2 – մեղքը ներված է
5. Սաղմոս 40:4, 84:12, Առակ. 16:20 – վստահում է ՅԱՀՎԵԻՆ
6. Սաղմոս 41:1-3, Առակ. 14:21 – մտածում է աղքատի մասին
7. Սաղմոս 84:5 – զորությունը ՅԱՀՎԵԻ մեջ է
8. Սաղմոս 89:15 – գիտի ուրախությունը և քայլում է ՅԱՀՎԵԻ երեսի լույսով
9. Սաղմոս 119:2 – փնտրում է Նրան իր ամբողջ սրտով, պահում է Նրա վկայությունը
10. Սաղմոս 112:1, 128:1 – վախենում է ՅԱՀՎԵԻց, քայլում է Նրա ճանապարհների մեջ
11. Սաղմոս 146:5 – ՅԱՀՎԵՆ նրա օգնությունն է
12. Առակաց 3:13 – իմաստություն է գտնում
13. Առակաց 8:32,34 – լսում է ՅԱՀՎԵԻՆ, պահում է Նրա ճանապարհները
14. Առակաց 28:14 – վախենում է ՅԱՀՎԵԻՑ
15. Առակաց 29:18 – պահում է ՅԱՀՎԵԻ օրենքները

Պողոսը մեջբերում է այս Սաղմոսի առաջին երկու համարները LXX-ից Հռոմ. 4:7-8-ում Դավթի մասին տված իր օրինակում, որպես երանելի մի մարդու, որի մեղքը ներվեց:

Ուշադրություն դարձրե՛ք տարբեր բառերի, որոնք կիրառվում են նկարագրելու ՅԱՀՎԵԻ դեմ ապստամբությունը (տես՝ Սաղմ. 32:5):

1. անօրենություն – BDB 833, KB 981, այն մատնացույց է անում Աստծո կամքը գիտակցաբար կերպով խախտելը (այսինքն՝ ուխտը):
2. մեղք – BDB 308, KB 306, այն արտահայտում է դրված թիրախի վրիպում (BDB 306), դարձյալ ոչ թե տգիտությամբ, այլ հոժարությամբ
3. հանցանք – BDB 730, KB 799, հանցագործություն, սխալ արարք (#1,2,3 միասին կարծես թե հայտնվում են Ելից 34:7, Դևտ. 16:21, Հոբ 12:23-ում, և այստեղ, Եսայի 59:12, Եզեկ. 21:24, Դան. 9:24):
4. նենգություն – BDB 941, KB 636, նշանակում է խաբեություն, խորամանկություն, խարդախություն (տես՝ Սաղմ. 52:2, 101:7, 120:2-3):

ՍԵՏ Տերստային ձեռնարկը նշում է, որ սաղմոսերգուն դիտավորյալ է անցում կատարում ԱՐԱԿԱՆ, ԻԳԱԿԱՆԻ (երկու անգամ), դրանով իսկ ցույց տալով լիարժեքություն (էջ՝ 303):

ՅԱՀՎԵԻ (նկատեք ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅՆԵՐԸ) ներումը նկարագրվում է որպես մեղավորներին տրված արդարություն՝ հիմնված Աստծո ողորմության և նրանց ապաշխարության վրա (սա է վերագրումի աստվածաբանական հասկացությունը [տես՝ BDB 362, KB 359, Ծննդ. 15:6, Հռոմ. 4:3, Գաղ. 3:6]):

1. ներված (բառացի՝ «բարձրացված և հեռացված») – BDB 669, KB 724, *Qal* ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ, տես՝ Ելից 32:32, 34:7, Թվից 14:18,19, Միքիա 7:18, այս նույն բառը ժխտված տեսքով Ելից 23:21, Հեսու 24:19, Հոբ 7:21, Եսայի 2:9-ում:
2. ծածկված (այսինքն՝ տեսադաշտից հանված, աստվածաբանական հասկացությունը Եսայի 38:17, 43:25, Միքիա 7:19) – BDB 491, KB 487, *Qal* ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ:

Արդյունքում մարդը առանց նենգության՝ հանցանքի է (տես՝ Հովհ. 1:47): Սա չի նշանակում անմեղ, այլ զղջացող՝ ապաշխարող:

32:2 «մարդ» Սա երբայերեն *Adam* (BDB 9) բառն է: Ծննդոցի սկզբնական մասերում (Ծննդոց 1-3) այն նկատի ունի Ադամին՝ առաջին մարդուն, սակայն հետագայում ստանում է ընդհանրապես մարդկության նշանակությունը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 32:3-7

³Երբ լուռ մնացի, ոսկորներս մաշվում էին, ամբողջ օրը հառաչելուց,

⁴Քանի որ ցերեկ ու գիշեր Քո ձեռքը ծանրացավ իմ վրա .

Իմ խոնավությունն ամառվա երաշտի վերածվեց: (Սելա)

⁵Իմ մեղքը Քեզ հայտնեցի ու իմ անօրենությունը չթաքցրի:

Ասացի, թե՛ «Խոստովանելու եմ ՏԻՐՈՉՆ իմ հանցանքները»,

Ու Դու ներեցիր իմ մեղքի անօրենությունը: (Սելա)

⁶Սրա համար էլ ամեն աստվածապաշտ աղոթելու է Քեզ՝

Այն ժամանակ, երբ Դու կգտնվես:

Իսկապես, շատ ջրերի հեղեղները բարձրանալիս նրանց չեն հասնելու:

⁷Դու ես իմ ապաստանը . պահպանելու ես ինձ նեղությունից:

Դու ինձ շրջապատելու ես փրկության երգերով: (Սելա)

32:3-7 Այս պարբերությունը մեղքի հարցի լուծմանը հակադրվում է երկու կերպով՝

1. լուռ մնալուց, այն ծածկելուց՝

ա. ոսկորներս մաշվեցին, տես՝ Սաղմ. 31:9-10

բ. ամբողջ օրը հառաչեցի

գ. կենսունակությունը (բառացի՝ «խոնավությունը», BDB 545, տես՝ Թվոց 11:8, այստեղ կիրառված է մարմնում առկա հեղուկի համար) չորացավ (NET Աստվածաշունչը առաջարկում է շտկում՝ «իմ կորստյանը», էջ՝ 888 #29)

2. ընդունել, խոստովանել

ա. ՅԱՀՎԵՆ ներում է մեղքի զգացողությունը (տես՝ Ելից 34:7, Թվոց 14:18, Սաղմ. 85:2)

բ. ապահովության զգացողությունը վերադառնում է

գ. ՅԱՀՎԵՆ դարձյալ դառնում է իր գաղտնարանը

դ. ՅԱՀՎԵՆ պահպանում է նրան նեղությունից

ե. նրան շրջապատում են ազատության երգերը

ՅԱՀՎԵՆ ձեռքերում մի խաղ կա . դատաստանի մեջ Նրա ձեռքերը ծանրանում են (Սաղմ. 32:4, Սաղմ. 38:2, 39:10, Հոբ 23:2), սակայն խոստովանության շնորհիվ Նրա ձեռքերը պաշտպանում են նրան (Սաղմ. 32:6-7):

32:4,5,7 «Սելա» Տես՝ Սաղմ. 3:2-ի գրառումը և Սաղմոսների Ներածությունը, VII:

32:5 «խոստովանելու եմ հանցանքներս» 1 և 2 տողերի զուգահեռականությունը պահանջում է հազվադեպ նշանակության ԲԱՅ (BDB 392, KB 389, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով): Սովորաբար *Hiphil* ձևով ԲԱՅԸ նշանակում է «գոհանալ», սակայն մի քանի համատեքստերում ակնհայտ իմաստը «խոստովանել»-ն է:

1. 3 Թագ. 8:33, 35, 2 Մնաց. 6:24, 26, որն արտահայտում է «ՅԱՀՎԵՆ անունը դավանել»

2. այստեղ և Առակ. 28:13-ում համատեքստը ենթադրում է «մեղք խոստովանել»:

32:6 «այն ժամանակ, երբ Դու կգտնվես» Այս անորոշ արտահայտությունը կարելի էմի քանի իմաստով հասկանալ՝

1. ապաշխարության համար գոյություն ունի նախատեսված՝ տեղին ժամանակ (LXX, Վուլգատտա, NKJV)

2. աղոթք կարիքի կամ նեղության ժամանակ (տես՝ 2 Մնաց. 15:4, շտկումը տես՝ NRSV, TEV, NJB)

3. MT տալիս է «գտնվելու ժամանակ» (տես՝ Սաղմ. 103:8-14, Եսայի 55:6): JPSOA թարգմանում է սա որպես «/մեղքը/ հայտնաբերելիս»:

❖ «**շատ ջրերի հեղեղները**» Ջուրը, կատաղի ջրերը, հաճախ գործածվում է որպես նեղության, անհանգստության, հարձակման համար դարձվածք (տես՝ Սաղմ. 69:1, 124:5, 144:7, և ամենագեղեցիկը Եսայի 43:2-ում):

32:7 Սա վերաբերում է խորանին՝ տաճարին: Փառաբանության երգերը երկրպագության կամ պատարագի երգերն են:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 32:8-11

⁸Քեզ խրատելու եմ ու սովորեցնելու եմ քեզ գնալուդ ճամփան .

Իմ աչքերով առաջնորդելու եմ քեզ:

⁹Մի՛ եղեք ձիու կամ ջորու պես, որոնք հասկացողություն չունեն,

Որոնց բերանը պետք է սանձով ու պախուրցով կապես, որպեսզի քեզ չմտենան:

¹⁰Ամբարիշտը շատ վշտեր է տեսնելու,

Իսկ նրան, ով ՏԻՐՈՉՆ է հուսացել,

Չորս կողմից ողորմություն է շրջապատելու:

¹¹ՏԻՐՈՉՈՎ ուրախ եղեք ու ցնձացե՛ք, ո՛վ արդարներ,

Ցնծությամբ գոչեցե՛ք, բոլո՛րդ, որ սրտով շիտակ եք:

32:8-11 Սաղմոսերգուն խոսում է ինքն իր հետ (և մյուսների՝ Սաղմ. 32:5) ՅԱՀՎԵԻ համար: Ահա աստվածային պատասխանը՝ Սաղմ. 32:8 (երեք ԸՂՁԱԿԱՆՆԵՐ):

1. Սաղմ. 32:5, ես խոստովանելու եմ իմ հանցանքները – BDB 392, KB 389, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով (տես ավելի լկիարժեք գրառումը Սաղմ. 32:5-ում)
2. Սաղմ. 32:8, Ես քեզ խրատելու եմ – BDB 968, KB 1328, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով:
3. Քեզ սովորեցնելու եմ – BDB 434, KB 436, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով
4. առաջնորդելու եմ – BDB 419, KB 421, *Qal* ԸՂՁԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 16:7

32:8 «ճամփադ» Սա աստվածահաճո կյանքի դարձվածք է (տես՝ Սաղմ. 1:1, 25:8-9):

❖ «**Իմ աչքերով**» Սա դարձվածք է անձնական հոգատարության և ներկայության համար (տես՝ Սաղմ. 32:18, Սաղմ. 34:15 /մեջբերված 1 Պետ. 3:12-ում/, Հոր 36:7):

ՅԱՀՎԵԻ համար գործածված «աչք» բառի համար տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. Աստված նկարագրված որպես մարդ (անտրոպոմորֆիզմ):

32:9 Այն անձը (ՀՈԳՆԱԿԻ) ով չի ապաշխարի, նկարագրվում է ըմբոստ, սակայն տնային դարձրած կենդանիների տերմիններով (տես՝ Եսայի 1:2-3): Ընկած մարդկությունը ապրում է կենդանական մակարդակի վրա՝ նկարագրված «ավելի ու ավելի շատ ունենամ ուտելիք, ցանկացած գնով» արտահայտությամբ:

❖ Դարձյալ հակադրություն

1. ամբարիշտները – շատ նեղություններ
2. հավատարիմ հետևորդը (այսինքն՝ «ՅԱՀՎԵԻՆ վստահողները»), ուխտի հավատարմությունը և սերը կշրջապատի նրան (տես՝ Սաղմ. 32:7բ):

32:10 «Գթասրտություն» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԳԹԱՍՐՏՈՒԹՅՈՒՆ (*HESED*)

❖ «**շրջապատելու**» Այս ԲԱՅԸ (BDB 685, KB 738, *Poel* ԱՆԿԱՏԱՐ) նաև կիրառվում է Սաղմ. 32:7-ում փրկության երգերի համար և այստեղ՝ ՅԱՀՎԵԻ գթասրտության համար (նաև նկատեք 2 Օր. 32:10, ԱԾԱԿԱՆԸ կիրառվում է Սաղմ. 34:7, 125:2-ում): Ինչպիսի՛ հրաշալի դարձվածք է ՅԱՀՎԵԻ ներկայության և պաշտպանության համար:

32:11 Մի շարք ՀՈԳՆԱԿԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ հավատարիմ հետևորդներին խրատելու համար՝

1. ուրախ եղեք – BDB 970, KB 1333, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. ցնծացե՛ք – BDB 162, KB 189, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. ցնծությամբ գոչեցե՛ք – BDB 943, KB 1247, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Թվարկե՛ք չխոստովանված մեղքի հետ կապված ֆիզիկական խնդիրները: Ի՞նչ է նշանակում «խոստովանել»:
2. Ինչպե՞ս են Սաղմոս 32 և 51 կապված:
3. Բացատրե՛ք ինչ է Սաղմ. 32:6ա նշանակում: Արդյո՞ք կա ժամանակ խոստովանելու, որը կարող է անցնել (այխանքն՝ հնարավորության պատուհան):
4. Ո՞վ է խոսում Սաղմ. 32:8-9-ում: